ՀԱՄԱՑԱՆՑԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

No_____(**ID**)

_____ /_____/ 2018թ.

«Ռեալ Թայմ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Կատարող), ի դեմս տնօրեն Վահե Լալայանի, որը գործում է Կատարողի կանոնադրության հիման վրա, մի կողմից և _____(այսուհետ նաև՝ Պատվիրատու)՝ մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. **Պայմանագրի առարկան**

1.1. Կատարողը Պատվիրատուին տրամադրում է համացանցի հասանելիության ծառայություն (այսուհետ նաև՝ Ծառայություններ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել Ծառայությունների դիմաց:

2. **Կատարողի պարտավորությունները և իրավունքները**

2.1 Ապահովել Պատվիրատուին պատկանող մեկ համակարգչի կամ այլ ցանցային սարքի միացումը համացանցին Կատարողի հանրային էլեկտրոնային ցանցի միջոցով (այսուհետ՝ Հասանելիության կետ)՝ _____ հասցեում:

2.2 Ապահովել Հասանելիության կետի անխափան աշխատանքը:

2.3 Խափանումների դեպքում տեղեկացնել Պատվիրատուին վերանորոգման/վերականգնման ժամանակահատվածի մասին:

2.4 Ժամանակին տեղեկացնել Պատվիրատուին պրոֆիլակտիկ և այլ աշխատանքների մասին, որոնք կհանգեցնեն կապի ժամանակավոր ընդհատմանը:

2.5 Կատարողն իրավունք ունի անջատել Պատվիրատուի Հասանելիության կետը համացանցից Պայմանագրի 3.3 կետով նշված դեպքերում, մինչև միջադեպի կարգավորումը, ընդ որում, անջատման ժամանակահատվածը չի ներառվում ծառայությունների մատուցման պարապուրդի հաշվարկի մեջ:

2.6 Կատարողը, Պայմանագրի առնչությամբ ծանուցումները կարող է Պատվիրատուի էլեկտրոնային հասցեին, հեռախոսահամարին հաղորդագրության ուղարկման, ինչպես նաև՝ փոստային առաքման միջոցով՝ իր ընտրությամբ: Սույն կետում նշված որևէ եղանակով ծանուցումը համարվում է պատշաճ ծանուցում, և Պատվիրատուն պարտավորվում է հետևել դրանց ստացմանը, իսկ իր հասցեների և հեռախոսահամարի փոփոխության վերաբերյալ անհապաղ տեղեկացնել Կատարողին: Պատվիրատուն տեղեկացված է, որ իր և Կատարողի միջև հեռախոսազանգերը, սպասարկման որակի հսկողության և բարելավման նկատառումներով, կարող են ձայնագրվել, և տալիս է իր համաձայնությունն առ այն, որ այդ ձայնագրությունները մշակվեն ու օգտագործվեն Կատարողի կողմից:

3. **Պատվիրատուի պարտավորությունները և իրավունքները**

3.1 Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

3.2 Պատվիրատուն իրավունք չունի վերավաճառելու կամ այլ հիմքով փոխանցելու կամ այլ կերպ հասանելի դարձնելու Ծառայությունների մատուցմամբ ստացածը երրորդ անձի:

3.3 Պահպանել համակարգչային ցանցերում գործող ընդհանուր օրինակարգը, խուսափել ցանցը անտեղի ծանրաբեռնելուց, օրինակ՝ վիրուսակիր ծրագրերից, որոնք կարող են խանգարել ցանցի այլ բաժանորդների աշխատանքին:

3.4 Եթե Պատվիրատուն ունի Հասանելիության կետի բաշխման խնդիր ներքին համակարգչային ցանցի միջև, որը կապված է ծրագրային կամ սարքավորումային լրացուցիչ միջոցների ձեռքբերման, կարգավորման, տեղադրման հետ, ապա նմանատիպ սպասարկման իրականացումը կատարվում է Պատվիրատուի կողմից՝ իր իսկ միջոցների հաշվին:

3.5 Կապի ընդհատման դեպքում Պատվիրատուն իրավունք ունի զանգ կատարել Կատարողի գրասենյակ՝ տեխնիկական խնդրի պատճառը և դրա վերացման ժամանակահատվածը պարզելու համար:

3.6 Սպասարկման հեռախոսահամարները և աշխատանքային ժամերը նշվում են Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ում ներկայացված սակագնային պլանի մեջ ինչպես նաև ընկերության կայքում (http://www.realtime.am):

3.7 Պատվիրատուն իրավունք չունի կատարել գործողություններ, որոնք կարող են խափանել հասանելիության ցանցի (ՀՑ) աշխատանքը: Պատճառել նյութական վնաս ՀՑ-ի մյուս մասնակիցներին այդ թվում Կատարողին:

4. **Ծառայության գները, որակական, տեխնիկական պայմանները և վճարումները**

4.1 Պատվիրատուն վճարում է Կատարողին ծառայությունների դիմաց համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ի գնացուցակում նշված ծառայության:

4.2 Պատվիրատուի կողմից ընտրված ծառայությունն է՝ _____:

4.3 Հաշվի առնելով այն, որ Պայմանագիրը գործելու է առնվազն 1 (մեկ) տարի ժամկետով՝ ինտերնետ հասանելիության ապահովման համար միացումները, սակագնային պլանի ընտրությունը (տրամադրվող

կապի արագությունը) ինչպես նաև սակագնային փաթեթների՝ Պայմանագրի 4.4 կետով նախատեսված փոփոխությունները կատարվում են Կատարողի կողմից անվճար:

4.4 Պատվիրատուն իրավունք ունի, առանց որևէ տուժանք վճարելու, ընտրել այլ սակագնային պլան, եթե դրա արժեքն ավելի է, քան գործող սակագնային պլանինը:

4.5 Պատվիրատուն իրավունք ունի, առանց որևէ տուժանք վճարելու, տարեկան 2 (երկու) անգամից ոչ ավելի և ընդամենը մինչև 1 (մեկ) ամիս ժամկետով դիմելու Պայմանագրի գործողության կասեցման համար: Ընդ որում, Պայմանագրի գործողության ժամկետը ինքնին երկարաձգվում է կասեցված օրերի քանակով:

4.6 ՀՑ-ին միանալու պահին գործող սակագնային պլանը կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը և արտահայտում է սակագների տեխնիկական պայմանները: Սակագնային պլանի փոփոխությունները Կատարողը կարող է իրականացնել միակողմանի, առանց բաժանորդին տեղյակ պահելու, եթե այդ փոփոխությունը վերաբերվում է որակական կամ տեխնիկական պայմանների բարելավմանը:

4.7 Պատվիրատուի կողմից վճարումները կատարվում են յուրաքանչյուր ընթացիկ ամսվա համար Ծառայության ակտիվացման օրվանից սկսված 10 աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումները կատարվում են նախ Կատարողի՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում սպասարկվող 2050022059901001 հաշվարկային հաշվին փոխանցում կատարելու, նաև Հայփոստի մասնաճյուղերում՝ նշելով պայմանագրի համարը, առկայության դեպքում, վճարային տերմինալների միջոցով: Վճարման կետանցի դեպքում Կատարողն իրավունք ունի միակողմանի դադարեցնելու ծառայության մատուցումը մինչև վճարումը կատարելը: Ընդ որում, եթե սույն կետում նշված հիմքով Ծառայությունների մատուցման դադարեցման ժամանակահատվածը չի գերազանցում մինչև տվյալ ընթացիկ ամսվա վերջին օրը, ապա Պատվիրատուի կողմից վճարումները վերսկսելու դեպքում Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է պարապուրդի ժամանակահատվածի չափով:

4.8 Խափանումների վերացման առավելագույն ժամանակահատվածը նախատեսվում է 24 ժամ՝ մեկ օրացույցային ամսվա համար՝ անփոխհատույց: Տվյալ ժամանակահատվածը գերազանցելու դեպքում Կատարողը փոխհատուցում է պարապուրդի ժամանակահատվածը՝ համապատասխան ժամկետով ծառայություն մատուցելու միջոցով:

4.9 Կատարողի կողմից Պատվիրատուին, որևէ ակցիայի շրջանակում տրամադրվող Ծառայությունների ժամկետը չի հաշվարկվում Պայմանագրի գործողության ժամկետի մեջ և այն երկարաձգվում է լրացուցիչ տրամադրված Ծառայությունների ժամկետով:

5. **Կողմերի պատասխանատվությունները**

5.1 Պայմանագրով նշված պարտավորությունները չկատարելու դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ գործող օրենսդրության համապատասխան:

5.2 Եթե Պատվիրատուն խախտել է Պայմանագրի պայմանները, Կատարողն իրավունք ունի դադարեցնելու ծառայությունների մատուցումը:

5.3 Կատարողը պատասխանատվություն չի կրում Պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու համար այն դեպքում, երբ դա պայմանավորված է Կատարողի կողմից չկարգավորվող հանգամանքներով և պատճառներով. որոնցից են՝ ՀՀ-ում և նրա տարածքից դուրս համացանցի (դրա մի հատվածի) աշխատանքի խափանումը, ինչպես նաև Պատվիրատուի համակարգչի(ների) և(կամ) ներքին ցանցի աշխատանքի խափանումները:

5.4 Կատարողը պատասխանատվություն չի կրում, իսկ Պատվիրատուն պատասխանատվություն է կրում իր կողմից համացանցից և համացանց ներբեռնված և ուղարկված տեղեկատվության բնույթի, ծավալի և անձեռնմխելիության համար:

5.5 Կատարողը պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի համակարգչից տվյալների կորստի համար, Պատվիրատուի համակարգչից ոչ թույլատրված մուտքի համար, որը պայմանավորված է եղել որևէ կերպ տարածված համակարգչային վնասակար ծրագրի գործունեության պատճառով:

5.6 Պայմանագրի 3.2 կետի խախտման յուրաքանչյուր դեպքի համար Պատվիրատուն, Կատարողի պահանջով, պարտավոր է վճարել 25,000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ տուգանք:

5.7 Եթե Պայմանագրի գործողությունը շարունակվում է մեկ տարի՝ Պատվիրատուի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների բարեխղճորեն և անընդհատ կատարմամբ, ապա Պատվիրատուն wifi սարքի դիմաց որևէ վճարման պարտավորություն չի ունենում:

5.8 Պայմանագրի գործողությունը Պատվիրատուի նախաձեռնությամբ (այդ թվում՝ նաև անգործությամբ) կամ մեղքով ժամկետից շուտ դադարեցնելու դեպքում, Պատվիրատուն, Կատարողի պահանջով, պարտավոր է վճարել **9,400 (ինը հազար չորս հարյուր) ՀՀ դրամ ծառայության ակտիվացման վճար** (ներառյալ՝ սարքավորումների մոնտաժման և ապամոնտաժման վճարը**19,000 (տասնինը հազար) ՀՀ դրամ հրաժարագին, ինչպես նաև՝ կատարվում է Ծառայության մատուցման գնի վերահաշվարկ, որի համար հիմք է ընդունվում ամսական _____,_____(_____ հազար _____հարյուր) ՀՀ դրամը:**

6. **Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

6.1 Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետեւանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, եւ որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Այդպիսի իրավիճակներ են մասնավորապես՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, այլ բնական աղետները, եղանակային վատթար պայմանները՝ մասնավորապես, սակայն չսահմանափակվելով՝ քամին, ամպրոպը, կայծակը, կարկուտը, հեղեղը, սողանքը, եւ այլն, պատերազմը, ռազմական եւ արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, խափանումը, պետական մարմինների ակտերը եւ այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը:

7. **Պայմանագրի գործողության ժամկետը և դադարեցման կարգը**

7.1 Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ Պայմանագրի պայմանները կիրառվում են _____ / _____ / 20_____թ-ից (Ծառայությունների մատուցման սկիզբ) միմյանց միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:

7.2 Պայմանագիրը գործում է մինչև _____ /_____/20_____թ-ը ներառյալ:

7.3 Եթե Պայմանագրի ժամկետի ավարտին Պատվիրատուն վճարում է հաջորդ ամսվա համար, ապա Պայմանագիրը ճանաչվում է վերսկսված նույն պայմաններով՝ ևս 1 (մեկ) տարի ժամկետով:

7.4 Պայմանագրի 7.3. կետում նշված կարգը գործում է Պայմանագրի գործողության յուրաքանչյուր հաջորդ տարվա համար:

7.5 Պայմանագրի գործողությունը դադարեցնելիս Պատվիրատուն պարտավոր է վճարել մինչև ընդհատման պահը մատուցված ծառայությունների համապատասխան գումարը, ինչպես նաև վերադարձնել Կատարողի կողմից տրամադրված սարքավորումները՝ սարքին վիճակում և պատշաճ արտաքին տեսքով՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

7.6 Սարքավորումների ապամոնտաժումը կատարվում է Կատարողի կողմից՝ անհատույց, բացառությամբ Պայմանագրի 5-րդ բաժնով նախատեսված դեպքերի:

7.7 Պայմանագրի գործողության դադարեցման դեպքում Պայմանագրով չկարգավորված ֆինանսական և այլ հարցերը լուծվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, իսկ մեկամսյա ժամկետում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում Կողմերն իրավասու են դիմելու դատական պաշտպանության:

7.8 Պայմանագիրը և դրանով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ նյութական և դատավարական իրավունքի նորմերով: Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ Պայմանագրից ծագած վեճերը ենթակա են քննության Կատարողի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության դատարանում՝ անկախ Կատարողի կարգավիճակից:

7.9 Պայմանագիրը կազմված է հայերեն և ուժի մեջ է մտնում ծառայությունների մատուցման պահից: Պայմանագիրը և նրանում կատարված փոփոխություններն ու լրացումները վավեր են երկկողմանի հաստատման դեպքում:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Կատարող	**Պատվիրատու**
«Ռեալ Թայմ» ՍՊԸ **Հասցե՝** ք.Երևան, Ս.Տարոնցու 10ա	**Անուն Ազգանուն** _____
ՀՎՀՀ՝ 02229634	**Հասցե՝** _____
Հ/Հ «Ինեկոբանկ» ՓԲԸ 2050022059901001	**Էլ.հասցե՝** _____
Տնօրեն՝ Վ.Լալայան	**Անձնագիր՝** _____
_____ (ստորագրություն)	**Ծածկանուն** _____
Կ.Տ.	_____ (ստորագրություն)